ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԳՈՒՄԱՐՎՈՂ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՎԱՐՏԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

ՀՀ Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու և «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-912-29.03.2021-ԳԿ-011/0) օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ, ինչպես նաև այդ նախագիծը երկրորդ ընթերցմամբ քննարկելու, ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրություն իրականացնելու վերաբերյալ:

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է միջնակարգ կրթության ուսումնական հաստատությունների ուսուցչական կազմում նոր մասնագետներ ընդգրկելու ընթացակարգը բարելավելու հրատապությամբ, քանի որ գործող օրենքով սահմանված պայմանները բավականաչափ ճկուն չեն՝ ուսուցչի թափուր տեղը կամ ուսուցչական անձնակազմը համալրելու համար: Իրավիճակը հատկապես խնդրահարույց է բնագիտական առարկաների մասով, որտեղ օրինակ 2019-2020 թ . ուսումնական տարում հանրապետության 32 դպրոցներում ֆիզիկա առարկա չի դասավանդվել, նույնքան դպրոցներում էլ՝ քիմիա, երեք դպրոցում չի դասավանդվել մաթեմատիկա առարկան: Մտահոգիչ է նաև այս ուղղություններով մանկավարժական բուհերի ընդունելությունը, որը ցույց է տալիս, թե հեռանկարում խնդիրները ինչպես կարող են խորանալ: Օրինակ, 2020-2021 թ. ուսումնական տարում ոչ մի դիմորդ չի ընտրել ֆիզիկա մասնագիտությունը մանկավարժական մասնագիտացում ունեցող բուհերից որևէ մեկում: Ուսուցիչների բացակայությամբ պայմանավորված առարկաների դասավանդման անհնարինության արդյունքում խախտվում է երեխաների կրթության իրավունքը:

ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը 24.05.2021թ-ին կայացրել է ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածու ընտրելու վերաբերյալ որոշում: Հաշվի առնելով կառույցի աշխատանքի կարևորությունը անհրաժեշտ է իրականացնել թեկնածուի նշանակման հարցի քննարկում:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ

03.06.2021թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ ԳՈՒՄԱՐՎՈՂ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՎԱՐՏԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-912-29.03.2021-ԳԿ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1.Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասը Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2021թ-ի հունիսի 3-ին գումարվող արտահերթ նիստի ավարտից անմիջապես հետո գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-912-29.03.2021-ԳԿ-011/0) օրենքի նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրա ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում:
2) Առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» (Պ-912-29.03.2021-ԳԿ-011/0) օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

2021 թվական, հունիսի —